

**Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման
հիմնարար սկզբունքները**

**Fundamental Principles of the International Red Cross and
Red Crescent Movement**

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

HUMANITY

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

IMPARTIALITY

ՉԵՉՈՔՈՒԹՅՈՒՆ

NEUTRALITY

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

INDEPENDENCE

ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

VOLUNTARY SERVICE

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ

UNITY

ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒԹՅՈՒՆ

UNIVERSALITY



Ամենօրյա լարված ու պատասխանատու գործունեությունից հետո ամփոփելով տարվա աշխատանքը կարող ենք նշել, որ 2017 թվականն էլ լի էր բազմաթիվ մարտահրավերներով ու դժվարություններով, բայց միևնույն ժամանակ նաև ձեռքբերումներով ու զարգացման նոր հնարավորություններով:

Անցյալ տարվա ընթացքում նոր թափ ստացան մարզային մասնաճյուղերի զարգացմանն ուղղված ծրագրերը՝ նպաստելով և կամավորական ներուժի հզորացմանը, և տեղական նոր նախաձեռնությունների առաջ գալուն: Մեր գործընկերների աջակցության շնորհիվ կարողացանք ակտիվացնել հատկապես Տավուշի մարզային մասնաճյուղի գործունեությունը, որը հետագայում օրինակելի մոդել կհանդիսանա մյուս մասնաճյուղերի զարգացման համար:

Կազմակերպության զարգացմանը նպաստելու համար մշակվել են մի շարք ինստիտուցիոնալ փաստաթղթեր:

Անցյալ տարի եռակողմ համաձայնագիր ենք ստորագրել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի երևանյան գրասենյակի հետ՝ ընդլայնելով համագործակցության ոլորտները: Առաջին օգնության և անվտանգ վարքագծի գիտելիքների տարածումը, անվտանգ տարածքների, խաղահրապարակների ու պաշտպանիչ պատերի կառուցումը Տավուշի սամանամերձ համայնքներում իրականություն դարձավ այդ համագործակցության և մեր մյուս գործընկերների աջակցության շնորհիվ:

Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ անցյալ տարի երկու բարեգործական ճաշարան բացեցինք



Summarizing the daily tense and responsible work of the last year, we can state, that the 2017 was full of numerous challenges and difficulties, but also with achievements and new opportunities for development.

New impetus was given to the projects towards Regional Branches development, which enhanced both the volunteer capacity strengthening and the occurrence of new local initiatives.

Due to the support of our partners, we managed to enhance the activities of Tavush Regional Branch, which can become a role model for other branches.

The foster Organizational Development number of institutional documents have been developed.

Last year we signed a Tripartite agreement with the RA Ministry of Emergency Situations and International Committee of the Red Cross Delegation in Yerevan, enlarging the spheres of cooperation. Dissemination of First Aid and Safe Behavior skills, construction of safer spaces, playgrounds and protective walls in border communities of Tavush became possible thanks to that cooperation and, of course, with the support of our other partners.

With the assistance of Swiss Red Cross we launched Soup Kitchens in Masis, Ararat and Armavir, Armavir, where 160 lonely elderly people receive hot meal every day.

Aging population is a priority issue for our society, and number of state projects are being developed for lonely elderly care provision. To support the

Արարատի Մասիս և Արմավիրի Արմավիր քաղաքներում, որտեղ ամեն օր տաք ճաշ են ստանում 160 տարեց անապահով տարեցներ:

Բնակչության ծերացման խնդիրը մեր հանրության սոցիալական առաջնահերթ խնդիրներից մեկն է, և միայնակ տարեցների խնամքի կազմակերպման ուղղությամբ պետական բազմաթիվ ծրագրեր են մշակվում: Այստեղ էլ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ որպես աջակից կառույց կառավարությանը, պետական կառույցներին աջակցելու համար, նախորդ տարի Լոռու և Շիրակի մարզերում «Համայնքային ինտեգրացված խնամք և առողջ ծերացում» ծրագրի շրջանակներում ներդրել էր միայնակ անկողնային տարեցների տնային խնամքի մոդելը, որն այս տարի արդեն լիովին կայացած կարող ենք համարել, և հնարավորության դեպքում, պլանավորում ենք տարածել նաև այլ մարզերում: Նույն ծրագրի շրջանակներում ներկայացրեցինք նաև Առողջ երկարակեցության հայեցակարգը, որը բարձր գնահատվեց և պետական մարմինների, և հենց համայնքների մասնակիցների կողմից:

Շարունակել ենք նաև սիրիահայերի ինտեգրմանն ուղղված գործունեությունը՝ մշակելով նոր մոտեցումներ, որոնք նրանց մարդասիրական խնդիրներին բազմակողմանի և ամբողջական արձագանք կապահովեն ու կնպաստեն երկարաժամկետ ինտեգրմանը:

Մենք մշտապես աշխատել և աշխատելու ենք գործընկերների ցանցի ընդլայնման, ինչպես նաև տեղական և միջազգային ռեսուրսների մոբիլիզացման ուղղությամբ: Ծննդյան տոներին կազմակերպված «Նվիրիր հույս» ակցիան ցույց տվեց, որ մեր հանրությունը պատրաստ է աջակցելու ամենախոցելիներին:

Մենք շնորհակալ ենք բոլոր գործընկերներին, նվիրատուներին՝ կազմակերպություններին ու անհատներին, որոնց աջակցության շնորհիվ մենք կարողանում ենք իրականացնել մեր մարդասիրական առաքելությունը, շնորհակալ ենք մեր կամավորներին՝ իրենց նվիրված ու անշահախնդիր աշխատանքի համար:

state bodies in this field, Armenian Red Cross Society, as an auxiliary organization to the public authorities, introduced a lonely elderly home care model in Lori and Shirak regions, in the frames of “Integrated Community-Based Home Care Service Provision And Healthy Ageing” project. The model can be considered as fully and successfully established, and, we plan to implement it in other regions as well, as soon as we have enough funds and capacities.

We continued our efforts with new approaches towards the integration of Syrian Armenians, to ensure comprehensive and complete response to their humanitarian needs and foster long-term integration process.

We have always worked towards and will continue our efforts to enlarge the network of our partners, as well as mobilization of local and international resources. The “Give Hope” Christmas fundraising campaign proved, that our people are committed to support the most vulnerable.

We express our gratitude to all our partners and donors, organizations and individuals, who make possible the implementation of our Humanitarian Mission. We thank also our Volunteers, for their dedicated and selfless work.

**Նախագահ
Մխիթար Մնացականյան**



**President
Mkhitar Mnatsakanyan**

**Գլխավոր քարտուղար
Աննա Եղիազարյան**



**Secretary General
Anna Yeghiazaryan**

**Հայկական Կարմիր խաչի ընկերությունը,
ըստ իր 2011-2020 թթ. ռազմավարության
առաջնորդվում է հետևյալ արժեքներով.**

Մարդիկ

Մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների կարողությունները՝ գործելու հանդուրժող միջավայրում և գտնելու կայուն լուծումներ իրենց ամենասնհրաժեշտ և խոցելի կարիքները հոգալու համար:

Ազնվություն

Մենք աշխատում ենք համաձայն մեր հիմնարար սկզբունքների՝ թափանցիկ և պատասխանատու կերպով:

Համագործակցություն

Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ՝ մենք համագործակցում ենք կառավարության, ինչպես նաև այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, հարգելով մեր խորհրդանիշները և ներկայացված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

Բազմազանություն

Մենք հարգում ենք համայնքների և մեր կամավորների, անդամների և աշխատակիցների բազմազանությունը՝ հիմնվելով անխտրականության և մեր անկողմնակալության և համընդհանրության սկզբունքների վրա:

Առաջնորդություն

Մենք ցուցաբերում ենք առաջնորդություն և մեր աշխատանքում ձգտում ենք գերազանցության՝ ուշադրություն դարձնելով համայնքների և դրանց իրավունքներին, կարիքներին և խոցելիությանը:

Նորարարություն

Մենք ներշնչվում ենք մեր ժառանգած պատմությունից և ավանդույթից, սակայն միաժամանակ փորձում ենք գտնել ստեղծագործական, կայուն լուծումներ խնդիրներին, որոնք վտանգում են փոփոխվող աշխարհում ապրող մարդկանց բարեկեցությունը և արժանապատվությունը:

**Մենք աշխատում ենք
ռազմավարական հետևյալ
ուղղություններով.**

Աղետների կառավարում

Բնակչության տեղաշարժ

Որոնում ծառայություն

Առաջին օգնություն

Սոցիալ-առողջապահություն

**Երիտասարդական,
Կամավորություն և
անդամակցություն**

**Մարդասիրական արժեքների
տարածում**

**Միջազգային
համագործակցություն**

Կազմակերպության զարգացում

Ռեսուրսների մոբիլիզացում

Աղետների կառավարում



Համայնքային կամավորական 15 թիմերի վարժանքը՝ Շիրակի մարզի Կապս համայնքում, 20.09.2017

2017թ. Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է գործողությունները բնական ու տեխնածին աղետների նկատմամբ համայնքների դիմակայունության բարձրացման ուղղությամբ՝ հզորացնելով նաև կազմակերպության կարողությունները աղետների նախապատրաստման և արձագանքման ոլորտում:

2017 թվականին աշխատել ենք 3 քաղաքային և 33 գյուղական համայնքներում՝ Շիրակում, Լոռիում, Սյունիքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում, Տավուշում ու Երևանում:

Շիրակի 25 և Լոռու 8 համայնքներում բարձրացվել է Համայնքային կամավորական թիմերի պատրաստվածության մակարդակը՝ ԱՌԿ, ԱՕ, որոնողափրկարարություն թեմաներով

թարմացման դասընթացների ու վարժանքների միջոցով: Լոռու մարզում արդիականացվել է թիմերի փրկարարական գույքը, տրամադրվել են Առաջին օգնության արկղիկներ և անհրաժեշտ պարագաներ:

Այս թիմերը 2017 թվականի ընթացքում արձագանքել են 100-ից ավելի արտակարգ իրավիճակի՝ հրդեհ, ավտոկթար, ձնաբքից մեքենաների դուրսբերում և այլն:

Սյունիքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում, Տավուշում ու Երևանում ձևավորվել են 10-15 անդամներից կազմված մարզային արձագանքման թիմեր, որոնք արդեն ՀԿԽԸ կամավորներ են:

Շիրակի 13 համայնքներում իրականացվել է խոցելիության և կարողությունների գնահատում՝ հաշվի առնելով համայնքներին սպառնացող

բնական վտանգները և բնապահպանական, առողջապահական և սոցիալ-տնտեսական ռիսկերը, որից հետո յուրաքանչյուրի համար մշակվել է ռիսկի նվազեցման գործողությունների ծրագիր՝ որպես աջակցող փաստաթուղթ համայնքների քառամյա ծրագրերում ԱՌՆ հիմնահարցերը ներառելու համար:

Գնահատման արդյունքների հիման վրա 8 համայնքներում ԱՌՆ փոքրամասշտաբ ծրագրեր են իրականացվել՝ արդիականացվել է աղբահանության, գիշերային լուսավորության և կոյուղաջրերի հեռացման համակարգերը՝ տեղադրվել են աղբամաններ, փոխվել են փողոցային լուսավորման լամպերը: Գույթ է տրամադրվել համայնքային մշակութային տներին՝ սոցիալական կյանքն աշխուժացնելու համար:

2017 թվականին Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի կողմից աշխարհի 5 երկրներում իրականացվող «Աղետների ռիսկի նվազեցման ճանապարհային քարտեզ՝ համայնքի դիմակայունության համար» նախաձեռնությանը մասնակցեց նաև Հայաստանը՝ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքով: Այստեղ գնահատվել են ռիսկերն ու դիմակայունության աստիճանը, մշակվել է համայնքի դիմակայունության բարձրացման ճանապարհային քարտեզ: Այս գործընթացը մեծապես նպաստել է շահագրգիռ կողմերի ու գործընկերների հետ համագործակցության խորացմանը:

Շարունակել ենք ամրապնդել աղետներին դիմակայելու դպրոցների կարողությունները: 112 դպրոցում արդիականացրել ենք տարիանման պլաններն ու սխեմաները, տրամադրել ենք տարիանման ուղղորդող նշաններ: 221 դպրոցում աջակցել ենք տարիանման ուսումնավարժանքների կազմակերպմանը, մարզային կրթության վարչության միջոցով շրջանառվել է Աղետների դիմակայունության թեմայով 1-ժամյա դաս և համապատասխան ուսումնական ձեռնարկներ, որը կօգնի դասղեկներին արտաժամյա ծրագրից մեկ դաս

նվիրել աղետների ռիսկի նվազեցման թեմաներին:

Լոռու և Շիրակի մարզերում 22 000 ընտանիք մշակել է Աղետի ընտանեկան պլան, 112 դպրոցի 22 000 աշակերտների համար կազմակերպվել է մրցույթ, լավագույն 12 աշխատանքները պարգևատրվել են:

Լոռու մարզի և Երևանի 28 դպրոցներում վերապատրաստված ուսուցիչները Աղետների ռիսկի նվազեցման և Առաջին օգնության դասընթացներ են անցկացրել մոտ 13 000 աշակերտի համար: 6000 աշակերտ մասնակցել է մեր կողմից կազմակերպված նկարչական մրցույթներին ու մանկական խաղ-վիկտորինաներին:

Մարդասիրական օգնություն՝ հրդեհից տուժածների

Չոկտեմբերի 25-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՉԿԽԸ) մարդասիրական օգնություն տրամադրեց Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Սիլիկյան 23 փողոցի 9 շենքում հոկտեմբերի 22-ի խոշոր հրդեհի հետևանքով տուժած 11 ընտանիքներին՝ 23 մարդու:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների՝ մարզպետարանի և քաղաքապետարանի հետ, պատահարից անմիջապես հետո ձեռնամուխ եղավ տուժածների առաջնային կարիքների արագ գնահատմանը:

Գնահատման արդյունքների հիման վրա ձևավորելով կենսական անհրաժեշտության պարագաների ցանկը, որպես արագ արձագանք, ՉԿԽԸ-ն տուժածներին տրամադրեց 1 ամսվա համար նախատեսված սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ, ծալովի մահճակալներ, տաք ծածկոցներ, ձմեռային կոշիկ, բաճկոններ և տաքատներ, սպորտային հագուստ և խալաթներ:

Բացի այդ, ընտանիքները օրը մեկ անգամ տաք ճաշ կստանան ՉԿԽԸ բարեգործական

ճաշարանում, որը գործում է Արմավիր քաղաքում՝ միայնակ տարեցների համար:

Հոկտեմբերի 22-ին, ժամը 22:00 սահմաններում խոշոր հրդեհ էր բռնկվել Արմավիրի մարզի

Արմավիր քաղաքի Սիլիկյան 23 փողոցի 9 շենքում: Հրդեհի հետևանքով շենքն ամբողջությամբ մոխրացել էր, իսկ շենքում բնակվող 11 ընտանիքները՝ մնացել անօթևան:



Արդիականացվել են վաղ ազդարարման համակարգերը

Կառուցելը դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում ծրագրի շրջանակներում սեպտեմբեր ամսվա ընթացքում Մանթաշի ջրամբարի ջրածածկման գոտում գտնվող 5 համայնքներում՝ Վարդաքար, Արևշատ, Գետափ, Սպանդարյան և Փոքր Մանթաշ արդիականացվել են վաղ ազդարարման համակարգերը՝ համայնքներում առկա շջակների 380 վոլտը փոխարկելով 220 վոլտի: Նույն համայնքներում, ինչպես նաև Մեղրաշեն համայնքում բնակիչների համար կազմակերպվեցին նաև ՎԱՀ (վաղ ազդարարման համակարգ) թեմայով դասընթացներ, որի ընթացքում համայնքի բնակիչներին իրազեկվեց ինչ է վաղ ազդարարումը և շջակների ազդարարման դեպքում ինչպես պետք է կատարվի տարհանումը:



Կամավորական թիմերի վարժանք

«Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի 4-րդ փուլի շրջանակներում Շիրակի մարզի Զեթի համայնքում կազմակերպվել էր Համայնքային կամավորական թիմերի վարժանք, որին մասնակցում էին Զեթի, Արեգնաղեմ, Բերդաշեն, Ձորաշեն և Փանիկ համայնքների թիմերը: Վարժանքի ընթացքում թիմերը ցուցադրեցին ծրագրի ընթացքում ձեռք բերած գիտելիքները՝ ինչպես տուժածին գետի վրայով անցկացնել ապահով վայր, սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերել, ինչպես արձագանքել ավտովթարին, եթե մեքենայում կա մի քանի տուժած և այլն:



**Կամավորական
թիմերի
100-ից ավելի
արձագանք**

36

**թիրախային
համայնք,**

28 000

**իրազեկված
դպրոցական**



22 000

**Աղետի
ընտանեկան պլան**

Սահմանամերձ համայնքներում բնակչության անվտանգության բարելավում

Նպատակ ունենալով բարելավել 2017թ. Հայաստանի և Ադրբեջանի միջև միջազգային սահմանի երկայնքով տեղակայված համայնքների բնակչության, հատկապես երեխաների անվտանգությունը՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԻՄԿ) և Գերմանական Կարմիր խաչի

Կարմիրադրյուր, Պառավաբար, Կոթի, Սարիգյուղ, Ոսկևան, Բերդավան և Այգեպար) մոտ 537 դպրոցականների և նրանց 60 ուսուցիչների համար անցկացվել են Առաջին օգնության, արտակարգ իրավիճակներում անվտանգ վարքագծի և ականների վերաբերյալ իրազեման դասընթացներ:

ՀԿԻՇ-ի, ԿԻՄԿ-ի և ՀՀ արտակարգ իրավիճակների միջև եռակողմ համաձայնագրի շրջանակներում առաջին օգնության դասընթացներ



Պաշտպանիչ պատ՝ Տավուշի մարզի Վազաշեն համայնքում

հետ համատեղ, ապահով սենյակներ, խաղահրապարակներ ու պաշտպանիչ պատեր է կառուցել Բերդավան, Վազաշեն, Չինարի, Ներքին Կարմիրադրյուր և Այգեպար համայնքերում:

10 սահմանամերձ համայնքներում հատուկ պատրաստված կամավորների միջոցով (Ազատամուտ, Չինարի, Մովսես, Ներքին

են անցել Տավուշի մարզի 10 համայնքներում գործող Արտակարգ իրավիճակների Նախարարության քաղաքաշտպանության փրկարարական ջոկատների անդամները՝ ընդհանուր մոտ 205 մարդ: Բոլոր մասնակիցներին տրամադրվել են «Առաջին օգնության տարրեր» ուսումնական ձեռնարկը, իսկ յուրաքանչյուր թիմին՝ 2-ական Առաջին օգնության արկղիկ: Թիմերը

վերջում մասնակցեցին Ազատամուտ համայնքում կազմակերպված Առաջին օգնության մրցումներին և գործնականում ցուցադրեցին իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Հաղթող ճանաչվեց Ոսկևանի թիմը, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրեցին Պառավաբար և Բերդավան թիմերը:

Կիրանց, Բարեկամավան, Դովեղ, Ներքին Ծաղկավան, Բերքաբեր, Բաղանիս, Ոսկեպար, Վազաշեն, Այգեհովիտ համայնքներում 2-5 կամավորներ՝ տեղացի բժիշկներ, համայնքի ղեկավարներ և նրանք, ովքեր սեփական մեքենա ունեն, անցել են Առաջին օգնության դասընթաց, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանք կարողանան վիրավորներին անվտանգ տեղափոխել բուժաստատություններ:

Դասընթացները վարել են ՀԿԽԸ հրահանգիչները՝ Առաջին օգնության եվրոպական խորհրդատվական կենտրոնի չափանիշներին համապատասխան:

Վերանորոգվել է Բերդավան համայնքի դպրոցի սպորտդահլիճը, իրականացվել են հողի մաքրման աշխատանքներ, կառուցվել են հենապատ և մանկական խաղահրապարակ: Վազաշենում համայնքում գյուղապետարանի և մանկապարտեզի շենքի մոտ կառուցվել է պաշտպանական պատ և մանկական խաղահրապարակ: Այգեպար համայնքում կառուցվել է խաղահրապարակ: Վերանորոգվել է Ներքին Կարմիր աղբյուր գյուղի դպրոցի ապահով սենյակը: Չինարի գյուղում կառուցվել են պաշտպանական պատեր և վերանորոգվել է դպրոցի ապահով սենյակը:



Խաղահրապարակ՝ Տավուշի մարզի Վազաշեն համայնքում

Բնակչության տեղաշարժ



Մանկական վերանորոգված սենյակի վերաբացումը Ապաստան հայցողների հատուկ կացարանում, 10.07.2017

2017թ. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ տեղահանված բնակչությանն աջակցելու նպատակով շարունակել ենք մեր գործունեությունը հետևյալ առաջնահերթ ուղղություններով՝ ապաստան հայցողների ընդունման պայմանների բարելավում, ընտանիքների ինքնաբավության և ինտեգրման ապահովում, սեռով և գենդերով պայմանավորված բռնության դեպքերի կանխարգելում և արձագանք, տեղահանված երեխաների իրավունքների պաշտպանություն:

Դեռևս 2013 թվականից ՀՀ-ում ապաստանած փախստական ընտանիքների համար Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է տնտեսական ինտեգրմանն ուղղված

բազմաբնույթ ծրագրեր, որոնցից էր եկամտաբեր գործունեության խթանումը՝ համապատասխան գործիքների, սարքավորումների կամ խոշոր եղջերավոր անասունների տրամադրումը: Եկամտաբեր գործունեությունը փաստականների շրջանում ամենապահանջված աջակցության ձևը դարձավ: Խոհարարական, վարսահարդարման, մեքենայի վերանորոգման և մի շարք այլ ոլորտների աջակցությունը հնարավորություն է տալիս փախստականներին ու տեղահանված անձանց սեփական փոքր բիզնեսը սկսել Հայաստանում: 2017 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 146 փախստական կամ փախստականի նման կարգավիճակ ունեցող ընտանիքներ, որոնք Հայաստան էին եկել Սիրիայից, Ադրբեջանից, Եմենից, Նիգերից ու Լեռնային Ղարաբաղից,

ստացան համապատասխան գործիքներ և բիզնես-խորհրդատվություն՝ սեփական ինքնաբավությունը ապահովելու և եկամուտ վաստակելու նպատակով:

Ընդհանուր առմամբ 486 մտահոգության առարկա հանդիսացող (ապաստան հայցողներ, փախստականի կարգավիճակ ստացած, փախստականի նման կարգավիճակ ունեցող և տեղահանված) անձ դիմել է ՀԿԽԸ՝ տարբեր կարիքներով: 2017 թ. Սյունիքի, Լոռու, Տավուշի և



Կարի մեքենա՝ փոքր բիզնես սկսելու համար: Եկամտաբեր գործունեության բաղադրիչը, որի շրջանակներում գործիքներ ու սարքավորումներ են տրամադրվում փախստականներին, շարունակում է մնալ աջակցության ամենապահանջված ձևը:

Շիրակի մարզերի մարզային մասնաճյուղերի միջոցով և ՀՀ ԱԱԾ ու ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ սերտ համագործակցությամբ՝ սահմանակետերի, ինչպես նաև Չվարթնոց միջազգային և Գյումրու օդանավակայաններում պարբերաբար իրականացրել ենք սահմանի մոնիթորինգային 66 այցելություն, նշված պետական գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստումներ: Տարվա ընթացքում

սահմանակետերում մի քանի ապաստան հայցողի և պոտենցիալ ապաստան հայցողի աջակցություն է տրամադրվել խորհրդատվության և ուղղորդման միջոցով: Մենք որոշել ենք կարիքներն ու ծանոթացրել ենք ապաստան հայցելու ընթացակարգերին՝ ազգային օրենսդրության համաձայն, ինչպես նաև մեր գործունեությամբ նվազեցրել ենք հետդարձի հնարավոր դեպքերը:

Սահմանակետերում աշխատող համապատասխան անձնակազմի՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերի ներկայացուցիչների և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների համար կազմակերպվել են մի շարք դասընթացներ և կլոր սեղաններ՝ փախստականների և ապաստան հայցողների իրավունքների, միջազգային և տեղական ընթացակարգերի, Եվրամիության լավագույն փորձի և այլ նմանատիպ թեմաների վերաբերյալ:

Ամեն շաբաթ մոնիտորինգային այցեր ենք իրականացրել նաև ՀՀ միգրացիոն ծառայության ապաստան հայցողների կացարանում, որտեղ անհատական խորհրդատվություններ ենք տրամադրել՝ իրավական, բժշկական, հոգեբանական, բնակության վայրի, աշխատանքի, սոցիալական կարիքների և այլ թեմաներով: Խորհրդատվությունների ընթացքում ՀԿԽԸ և այլ համագործակից կառույցների խնդրանքով ապահովվել է 635 ժամ բանավոր և 402 էջ գրավոր թարգմանություն՝ պարսկերեն, թուրքերեն, արաբերեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն, պուշտու, եզդիերեն, քրդերեն և այլ լեզուներով:

2017 թվականին վերանորոգել ենք ապաստան հայցողների, Նոր Նորքի և Դարբնիկի հանրակացարանների, ինչպես նաև միգրացիոն պետական ծառայության Նոր գրասենյակի տարածքներ:

Սեռով ու գենդերով պայմանավորված բռնությունների (ՍԳՊԲ) կանխարգելման նպատակով 4 դասընթաց ենք անցկացրել

մտահոգության առարկա հանդիսացող 104 անձանց համար:

Ստեղծել ենք սաև Կանանց փոխաջակցման խումբ, որի շրջանակներում կայացող ամենամյա հանդիպումները օգնել են նվազեցնել կանանց մոտ տեղահանման հետևանքով առաջացած տրավմաների ազդեցությունը, կանխարգելել հոգեբանական բազմաթիվ խնդիրներ և ընտանեկան կոնֆլիկտներ, կանանց հզորացման միջոցով, գիտելիք և տեղեկատվություն փոխանցելու միջոցով՝ նվազեցնել գեղորով պայմանավորված բռնությունը:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության ցանցի ակտիվ անդամ է: Փախստական և տեղահանված երեխաների

աջակցության նպատակով 2017թ. իրականացրել ենք մի շարք գործողություններ՝ կազմակերպել ենք ՀՀ օրենսդրության վերլուծություն՝ փախստական երեխաների իրավունքների տեսանկյունից՝ բացերը դուրս բերելու և համապատասխան լուծումներ առաջարկելու համար, կազմակերպել ենք դրական ծնողավարման 2 դասընթաց՝ երկու և ավելի երեխաներ ունեցող կանանց համար, արձագանքել ենք փախստական երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող 20 դեպքի՝ իրականացնելով դեպքի վարում՝ համագործակից Նառույցների Ներգրավմամբ: Երեխայի լավագույն շահի գնահատման վերաբերյալ երկու դասընթաց է կազմակերպվել փախստական երեխաների հետ առնչություն ունեցող մասնագետների համար:



Գեղորով պայմանավորված բռնությունների դեմ պայքարի 16 - օրյակի շրջանակներում ՀԿԽԸ Գլխավոր բարտուղար Աննա Եղիազարյանը և ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի ղեկավար պրն. Զրիստոֆ Բիրվիրթը ստորագրեցին Սեռով և գեղորով պայմանավորված բռնության (ՍԳՊԲ) դեպքերի վարման ստանդարտ գործառնական ընթացակարգեր:

Հայկական Կարմիր խաչի շնորհիվ մենք մեկ քայլ առաջ ենք գնացել

Լիանան և իր ամուսինը միայն 15 օրով էին եկել Հայաստան, բայց շուտով հասկացան, որ երկար են մնալու: Նրանց՝ Հայաստան գալուց մի քանի օր անց Սիրիայում պայթեց պատերազմը, և վերադառնալու նրանց պլաններն արդեն անիրական դարձան.

- Այդ ժամանակ ես հղի էի, և որպեսզի մեր իրերը շատ չիներին, քիչ հագուստ էինք վերցրել և միայն 15 օրվա համար նախատեսված գումար, - պատմում է Լիանան:

Ամուսինները կորցնում են ամեն բան՝ տուն, աշխատանք, կահույքի գործարան: Մնում են միայն ուժեղ կամքն ու չհանձնվելու ունակությունը, որ օգնել են ամուսիններին ոտքի կանգնել՝ չնայած ահռելի դժվարությունների:

Այժմ ամուսինը այստեղ զբաղվում է կահույքի արտադրությամբ, իսկ Լիանան ունի իր ֆիթնես



կենտրոնը: Նա ինքը մարզիչ է՝ նույնիսկ Հայաստանում ստեղծված դժվարին պայմաններում վերապատրաստվել է և մագիստրոսի աստիճան ստացել:

- Կարմիր խաչն ինձ ստեպեր և գանտելներ (կշռաքարեր) տվեց, որոնք ինձ շատ օգնեցին այդ շրջանում: Այնուհետև բատուտներ տրամադրեցին, որի համար ես շատ շնորհակալ եմ:



146
գործիք և
սարքավորում

Մտահոգության
առարկա
հանդիսացող անձանց
և համագործակից
կառույցների
1500
ներկայացուցիչների
կարողությունների
զարգացում



486
անհատական
խորհրդատվություն

ՈՐՈՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ղարաբաղյան հակամարտության հետևանքով Տավուշի մարզի անհայտ կորած անձանց հիշատակին նվիրված պուրակի բացումը, 27.04.2017

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) «Որոնում» ծառայության գործունեությունն ուղղված է արձագանքելու մարդկանց, ում հարազատներն անհայտ կորած են, կամ որոնք տարանջատված են հարազատներից այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են հակամարտությունները, աղետները, բնակչության տեղաշարժը, միջազգային միգրացիան և մարդասիրական արձագանք պահանջող այլ իրավիճակները:

Ընտանեկան կապերի վերականգնում

2017 թ. ընթացքում մեր «Որոնում» ծառայությունը ստացել է ավելի քան 30 հայտ հետևյալ ուղղություններով. անհատների որոնում, ընտանիքի մասին տեղեկությունների

փոխանակման կազմակերպում, ընտանիքի անդամների հետ վերամիավորմանը կամ սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող փաստաթղթերի որոնում և հատկացում, զոհվածների շիրիմների գտնվելու վայրի որոնում և դրանց գոյությունը հաստատող փաստաթղթերի տրամադրում, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարահանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնում և հատկացում:

Կամավորների վերապատրաստում

ՀԿԽԸ բոլոր 10 մարզային մասնաճյուղերից 30 կամավորներ վերապատրաստվել են՝ ՀՀ մարզերում Որոնում ծառայության մասին իրազեկման տարածման համար, ինչպես նաև

անհրաժեշտության դեպքում, մարզային բնակիչներից որոնման հայտերի ընդունման համար:

ԿԽՄԿ-ի տվյալներով՝ դարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած են համարվում շուրջ 4500 մարդիկ, որոնցից մոտ 400-ի մասին որոնման հայտեր բացվել են Յայաստանում: ԿԽՄԿ-ն աշխատում է նաև անհայտ կորածների ընտանիքների հետ (ԱԿԸ)՝ ուշադրության կենտրոնում պահելով նրանց տնտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքները:

Սատարում անհայտ կորածների ընտանիքներին

Նախկինում իրականացրած «Անհայտ կորածների մինչմահու տվյալների հավաքագրում» ծրագրի ընթացքում առավել ակնհայտ դարձան անհայտ կորած հարազատ ունենալու սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները: Դա հիմք ընդունելով՝ Կարմիր խաչի Միջազգային կոմիտեն

հարազատի անհետացման արդյունքում առաջ եկած սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները հարթահարելու գործում:

2017թ.-ին ներգրավված են եղել Տավուշի՝ 11, Շիրակի՝ 11, Լոռու՝ 19, Արարատի՝ 34, Արմավիրի՝ 40, Վայոց Ձորի՝ 5, Սյունիքի՝ 47 և Գեղարքունիկ՝ 15 անհայտ կորած անձանց ընտանիքներ:

Անհայտ կորածների ընտանիքների անդամներն անցել են խոհարարական, նկարչության և գորելենի դասընթացներ. պայմանավորված վերջինիս առավել տպավորիչ արդյունքներով՝ Տաթևում կազմակերպվեց աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված անհայտ կորածների հիշատակման միջազգային օրվան: Շիրակում և Լոռիում անհայտ կորածների հիշատակման միջազգային օրը ևս նշանավորվեց հատուկ միջոցառումներով:

Կարմիր խաչն այդ ընտանիքների հետ է եղել նաև Ամանորին՝ կազմակերպելով տոնակատարություններ: Տարվա ընթացքում նրանք նաև մասնակցել են մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների: Շահառու ընտանիքների համար պարբերաբար անց են կացվել հանդիպումներ սոցիալական, առողջապահական, հոգեբանական ոլորտների մասնագետների հետ:

Կենսաբանական նմուշների հավաքագրում

Անհայտ կորած անձանց վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ձեռք բերելու նպատակով ԿԽՄԿ-ն ձեռնարկեց «Կենսաբանական նմուշների հավաքագրում» (ԿՆՅ) ծրագիրը, որը ՅԿԽԸ-ի հետ համագործակցությամբ մեկնարկեց 2014թ.-ին:

2017 թվականի ընթացքում ծրագիրը անցկացվեց Երևանում և մարզերում: Արդյունքում մոտ 129 անհայտ կորած անձանց հարազատներից հավաքագրվեցին կենսաբանական նմուշներ և վերաբերելի տվյալներ:



(ԿԽՄԿ) և ՅԿԽԸ-ն՝ ԿԽՄԿ-ի ֆինանսավորմամբ, ձեռնարկեցին «Սատարում անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, որի նպատակն է սատարել անհայտ կորածների ընտանիքներին՝

Առաջին օգնություն



ՀԿԽԸ Առաջին օգնության թիմը՝ ՀՀ ԱԻՆ ցուցադրական վարժանքին Երևանի պետական համալսարանում

Դասընթացներ

ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը Առաջին օգնության գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է զանգվածային միջոցառումների ժամանակ ԱՕ սպասարկում, ինչպես նաև՝ անվտանգ վարքագծի քարոզում:

2017թվականին մենթ դասընթացներ ենք անցկացրել ՀԿԽԸ կամավորների, սահմանամերձ և հեռավոր համայնքների բնակիչների, կրթահամալիրների, քաղաքացիական պաշտպանության թիմերի անդամների և մասնավոր կազմակերպությունների աշխատակիցների համար:

Ընդհանուր առմամբ իրականացվել է 80 դասընթաց և 15 սեմինար, որոնց մասնակցել է 1500 մարդ, վերապատրաստվել է 16 հրահանգիչ:

Առաջին օգնության գիտելիքները տարածվել են նաև ՉԼՍ-ների միջոցով: Մեր Առաջին օգնության մասնագետները մասնակցել են 1 տասնյակից ավելի հեռուստահաղորդումների և ուսումնական ֆիլմերի նկարահանումների:

Ֆուտբոլի խաղերի սպասարկում

2017թ. ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում Երևանում կայացած բոլոր խաղերի ընթացքում ՀԿԽԸ Առաջին օգնության խմբերն իրականացրել են մոտ 20 ԱՕ ծառայություն:



ԱԻՆ քաղաքաշտպանության թիմերի միջուկը Տավուշում, 13.11.2017

Ուսումնավարժանքներ

ՀԿԻՆ ԱՕ բաժինը մասնակցել է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից

դպրոցներում, ուսումնական հաստատություններում և արտադրական վտանգավոր օբյեկտներում իրականացվող բոլոր ուսումնավարժանքներին:



95
ԱՕ
դասընթաց



1500
մասնակից



16
Նոր
պատրաստված
հրահանգիչ

Սոցիալ-առողջապահություն



ՀԿԻԸ կամավորներն ամեն շաբաթ այցելում են հանրակացարաններում բնակվող միայնակ ծերերին

Սոցիալական աջակցություն

2017թ. ընթացքում ավելի քան 30 երիտասարդ կամավորների միջոցով շարունակել ենք սոցիալ-հոգեբանական ծառայություններ մատուցել Երևան, Աբովյան և Հրազդան քաղաքներում գտնվող հանրակացարաններում բնակվող շուրջ 120 միայնակ տարեց փախստականներին:

Նրանք ամեն շաբաթ այցելել են տարեցներին, ամիսը մեկ անգամ սնունդ և երեք ամիսը մեկ անգամ՝ հիգիենիկ պարագաներ տրամադրել, օգնել մանր կենցաղային գործերում՝ որոշ հարակացարաններում նաև լվացք ու արդուկ են արել: Տարվա ընթացքում կամավորները թատրոններ, համերգներ, քաղաքից դուրս գտնվող տեսարժան վայրեր են տարել նրանց, նվերներով և քաղցրեղենով նշել են ծննդյան օրերը: Բացի

փոքր կենցաղային գործերիցմ կամավորները նաև լվացք ու արդուկ են արել նրանց համար՝ հանրակացարանի հատուկ կահավորված սենյակում:

«Ժպիտների ակումբի» կամավորները հանրակացարաններում բնակվող 200 երեխաների համար ամեն շաբաթ կրթական և ինքնագարգացման միջոցառումներ են կազմակերպում՝ նպաստելու նրանց ինտեգրմանը:

Հանրակացարաններում՝ Կարմիր խաչի կողմից հատուկ կահավորված սենյակներում կամավորները ամեն օր պարապել են երեխաների հետ՝ դասերը պատրաստել և զանազան խմբակներում ներգրավել՝ մաթեմատիկայի, օտար լեզուների, աշխարհագրության և այլն: Սովորեցրել են համակարգիչ օգտագործել,

կազմակերպել են սպորտային և ժամանցային միջոցառումներ, ամեն ամիս տարել որևէ մշակութային միջոցառման՝ թատրոն, թանգարան և տեսարժան վայրեր: Երեխաների հետ կամավորները նշել են Չատիկը, Ամանորը, Հունիսի 1-ը և այլն, ամռանը՝ կազմակերպել ճամբար:

2017թ. առաջին կիսամյակում ավարտվեցին սիրիահայ երեխաների և երիտասարդների կայուն զարգացմանն ուղղված ծրագրեր, որն սկսվել էր 2014 թվականից:

Երեխաների համար կազմակերպել է 6 - ամսյա դասընթաց՝ ինտերակտիվ թեմատիկ պարապմունքների շարք: Դրանք անցկացվել են

նրանց գաղափարները կյանքի կոչելու համար: Ծրագրին մասնակցել է մոտ 100 երիտասարդ:

Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում

Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում ծրագրի հիմնական նպատակն է բարելավել տարեցների, քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց և հաշմանդամների կյանքի որակը՝ ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավման միջոցով, հիմնվելով այն հայտնի փաստի վրա, որ տարեցները և սահմանափակ կարողություններով անձինք ցանկանում են արժանապատիվ կյանք ունենալ, լինել որքան

Նվերներ բազմազավակ մայրերին՝ ապրիլի 7-ի կապակցությամբ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ապրիլի 7-ին՝ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ, Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի և գյուղական համայնքների 50 բազմազավակ կարիքավոր ընտանիքների տրամադրեց սննդի փաթեթներ և նվերներ: Միջոցառումն իրականացվել է Արմավիրի մարզպետարանի հետ համագործակցությամբ:



Երևանի թվով 10 դպրոցներում՝ մոտ 200-ից ավել սիրիահայ և տեղացի երեխաների համար: Պրապամունքների հիմքում ընկած է Կարմիր խաչի (Կարմիր մահիկի Ազգային Ընկերությունների ֆեդերացիայի (ԿԻՄՖ) և Սեյվ դը Հիլդրեն հիմնադրամի կողմից համատեղ մշակված մեթոդաբանությունը: Երիտասարդների համար կազմակերպվել են նորարարական միջոցառումներ՝ ճամբար, մեդիա դասընթացներ, ինչպես նաև տրամադրվել է ֆինանսավորում՝

հնարավոր է անկախ, ստանալ խնամք և աջակցություն՝ մնալով իրենց իսկ տանը, իրենց համար հարազատ շրջապատում:

Ծրագրի ինտեգրացված տնային խնամքի բաղադրիչի շահառուները տարեցները, քրոնիկական հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող անձինքն են, որոնք ընտրվում են սոցիալական ծառայությունների, նաև առողջապահական համակարգի ներկայացրած ցուցակներից՝ ծրագրի

աշխատակիցների կողմից մանրամասն անհատական կարիքի գնահատման հիման վրա:

Ճրագրի շահառուների խնամքն իրականացնում են՝

1) խնամքի բուժքույրերը՝ յուրաքանչյուր մարզում 3 բուժքույր

2) տնային խնամողները՝ յուրաքանչյուր մարզում 6 տնային խնամող

3) կամավորներ՝ յուրաքանչյուր մարզում 8 տնային խնամքի կամավոր, որոնց թիվը հաջորդ տարի դառնալու է յուրաքանչյուր մարզում 30 կամավոր

Ճառայությունները հստակ տարանջատված են խնամք իրականացնող այս երեք խմբերի համար: Մասնավորապես բուժքույրերի կողմից

իրականացվում են ներարկումները, դեղորայքի ընդունմանը հետևելը, մաշկի, լորձաթաղանթների խնամքը, ատամների, բերանի խոռոչի խնամքը, պառկելախոցերի կանխարգելումն ու խնամքը, հիվանդի շարժողունակությունը վերականգնելու նպատակով հատուկ վարժությունների, մերսումների իրականացումը և այլն:

Տնային խնամողների կողմից տրամադրվում է աջակցություն կենցաղային հարցերում, մասնավորապես՝ տան մաքրում, մաքուր անկողնային սպիտակեղենով, հագուստով ապահովում, սննդի պատրաստում, աջակցություն սնունդ ընդունելիս և այլն:

Անհատական կարիքի վրա հիմնված՝ շահառուները ստանում են նաև անվասայլակներ, քայլակներ, հակապառկելախոցային բարձեր և

ՀԿԽԸ տնային խնամքի նոր մոդելն արդեն երկու տարի է, ինչ գործում է Շիրակի և Լոռու մարզերում: Վանաձոր, 02.2017, © Նիկ Դանգիզեր





*Մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակետության հայեցակարգը
հանրությանը ներկայացվեց 2017 թվականի նոյեմբերին*

Ներքնակներ, ձեռնափայտեր, այլ անհրաժեշտ պարագաներ:

Կամավորների այցելում են շահառուներին, նրանց հետ զրուցում, ընթերցում, ուղեկցում խանութ, դեղատուն, կոմունալ վճարումներ անում, օգնում փաստաթղթեր լրացնել և այլն:

Բոլոր երեք խնամք իրականացնողներն էլ տրամադրում են նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն: 2017 թվականի ընթացքում ծրագրում ներառվել է 80 շահառու: Խնամքի նպատակը շահառուների կյանքի որակի բարելավումն է, սակայն նույնիսկ այն դեպքում, երբ անձը գտնվել է հիվանդության վերջին փուլում՝ նա ներառվել է ծրագրում՝ կյանքի մինչև վերջին պահը արժանապատիվ խնամք տրամադրելու նպատակով:

Ծրագրի երկրորդ բաղադրիչը ակտիվ երկարակետությունն է, որի նպատակն է ծերացմանը զուգընթաց երկարացնել առողջ և որակյալ կյանքի տևողությունը: 33 Շիրակի և Լոռու մարզպետարանների հետ համագործակցությամբ 2017 թ.-ին ընտրվել են

5-ական համայնք յուրաքանչյուր մարզում: Դրանք են. Վանաձոր, Սպիտակ, Մարգահովիտ, Օձուն և Մեծ Պարնի՝ Լոռու մարզում, և Ամասիա, Փանիկ, Նոր կյանք, Սպանդարյան և Զոռում՝ Շիրակի մարզում:

Մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակետությունը հնարավորություն է տալիս մարդկանց ակտիվ դեր ունենալ իրենց սեփական և համայնքային կյանքի բարելավման գործընթացում: Մարդիկ ձևավորում են խմբեր, բացահայտում և վերլուծում են իրենց և համայնքի խնդիրները, որոշումներ կայացնում և հանդես գալիս որպես հիմնական դերակատար վերը նշված գործընթացներում:

Ծրագրի նպատակն է ավելացնել համայնքային կյանքում ներգրավված տարեց անձանց և նրանց շփումների, այսինքն, խթանել տարեցների մասնակցությունը համայնքային կյանքի տարբեր ոլորտներում: Այդ նպատակով նշված 10 համայնքներում ստեղծվել են Նախաձեռնող խմբեր: Դրանք կազմվել են հիմնականում համայնքի տարեցներից, սակայն ընդգրկվել է



յուրաքանչյուր ցանկացող, անկախ տարիքից: Համայնքապետարանները նախաձեռնող խմբի անդամներին հավաքատեղի են հատկացրել՝ նրանց պարբերական հանդիպումների, աշխատանքի և գործողությունների պլանավորման համար: ՀԿԽԸ և համայնքի ուժերով հավաքատեղին հարմարեցվելու է տարեցների հանդիպումների համար (վերանորոգում, կահավորում, այլ): ՀԿԽԸ-ն աջակցում է նաև այդ խմբերի նախաձեռնություններին:

Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ-ն մշակել է մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակետյալի հայեցակարգ, որը ներկայացվել է 2017թ Նոյեմբերին: Հայեցակարգը կազմվել էր ոլորտի հիմնական ուղեցույցերի (փաստաթղթերի) և փորձի հիման վրա: Հայեցակարգային փաստաթղթի նպատակն է փոխել տարեց մարդկանց հանդեպ վերաբերմունքը և ծառայությունները, շեշտադրելով նրանց իրավունքները և արժևորումը:

Այս բաղադրիչի շրջանակներում 2018 թ. ավարտին ընտրվելու են ևս 5-ական համայնքներ երկու մարզերում: Ծրագրի ավարտին գործելու է առնվազն 20 համայնքային նախաձեռնող խումբ:

Բարեգործական ճաշարաններ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ, այս տարվա հուլիսից բարեգործական ճաշարաններ գործարկեց Արարատի և Արմավիրի մարզերում:

Այս նախաձեռնության շնորհիվ 80 տարեցներ յուրաքանչյուր մարզում ոչ միայն ապահովված են տաք, սննդարար ճաշով և հնարավորություն ունեն ամեն օր շփվել միմյանց հետ, այլև շրջապատված են ՀԿԽԸ կամավորների ու անձնակազմի ջերմությամբ ու հոգատարությամբ: Շահառուներն ընտրվել են հստակ որոշված կարիքների և մշակված չափանիշների հիման վրա: Գործընթացն իրականացվել է սերտորեն համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, հատկապես՝ մարզպետարանների և քաղաքապետարանների սոցիալական հարցերի բաժինների հետ:

Հայկական Կարմիր խաչի ընկերության նախաձեռնությանը միացել են և իրենց աջակցությունն են ցուցաբերում նաև տեղական ինքնակառավարման մարմիններն ու մասնավոր սեկտորը՝ Մասիս քաղաքապետարանն աջակցել է տարածքի վերանորոգմանը, որն անվարձահատույց տրամադրվել էր մասնավոր

անձի կողմից, Արմավիրի մարզպետարանն ապահովել է անվճար տարածք և կոմունալ ծախսերի փոխահատուցում, Արմավիրի քաղաքային տրանսպորտի տնօրինության հետ պայմանավորվածության համաձայն ապահովվում

Իջևանում, Նոյեմբերյանում, Դիլիջանում և Բերդում բնակվող 70 միայնակ տարեցների: Կամավորները մշտապես նրանց կողքին են, զրուցում են, օգնում են տնային գործերում, շուկա գնում՝ այդ կերպ մի-փոքր թերևս անցնելով

Տիկին Էմման Աշտարակում է ծնվել, երբ ամուսնացել է, ամուսնու հետ տեղափոխվել են Երևան, ինքը երկար տարիներ տոմսավաճառ է աշխատել, իսկ ամուսինը՝ վարորդ: Երկու դուստր ունի ու մի որդի, ամուսինը մահացել է: Արդեն 9 թոռ ու ծոռ ունի, բայց իրեն միայն մի աղջիկն է կարողանում օգնել, որդին կուրացել է, չի կարողանում աշխատել, մյուս աղջիկն էլ Երևանում է ապրում, հաճախ չի կարողանում իրեն այցելել: Որդին իր մեծ ընտանիքով ապրում է Ռանչպար գյուղում, երբ մեծ թոռն ամուսնացել է, տիկին Էմման իր սենյակը թողել է նրանց ու տեղափոխվել Մասիս: Շատ համեղ ու կարևորը կշտացնող է ճաշը, ոգևորված պատմում է տիկին Էմման. – Կարմիր խաչը փրկեց ինձ: Հիմա Մասիսում մենակ եմ ապրում՝ վարձով, մի նեղ սենյակ է: Այս մի անգամը, որ այստեղ եմ սնվում, արդեն ինձ համար մեծ օգնություն է: Այսքան բան որտեղից պետք է առնեի, բերեի պատրաստեի:



Է տարեցների անվճար տեղափոխումը, «Ապարան» ջրի գործարանի կողմից տրամադրվում է խմելու ջուր:

Կարիքավոր երեխաների ինտեգրում

Տավուշի մարզի Բերդի համայնքային մասնաճյուղը Բերդ քաղաքի անապահով ընտանիքների 30 երեխաների համար ստեղծել է ուսուցման կենտրոն, որտեղ կամավորները դասերից հետո նրանց սովորեցնում են կերպարվեստ, շյուղագործություն, շախմատ և այլն:

Կարիքավոր տարեց մարդկանց ամբուլատոր սոցիալ-բժշկական խնամք

Հայկական Կարմիր խաչի ընկերության Տավուշի մարզային մասնաճյուղի կամավորները

նրանց միայնությունն ու կենցաղային հոգսերը, իսկ երեք ամիսը մեկ անգամ տարեցները սննդային փաթեթ են ստանում:

Գթություն

ՀԿԽԸ Սյունիքի մարզային մասնաճյուղը՝ «Դանդի փրեշուս մեթալս Կապան» ընկերության աջակցությամբ իրականացնում է «Գթություն» ծրագիրը, որի շրջանակներում 200 միայնակ տարեց տարին մեկ ստանում են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ և դեղահաբեր:

Անկողնային միայնակ տարեցները ծանրոցները ստանում են տարին երկու անգամ, իսկ կամավորները նրանց բոլորի կողքին են լինում ամբողջ տարին՝ նշելով Ամանորը, Չատիկը և ծննդյան օրերը:

Առողջապահություն

ՀԿԽԸ 40 կամավորներ ՀՀ բոլոր մարզերում իրականացրել են են իրազեկման միջոցառումներ և հարցումներ տուբերկուլյոզի դեպքերի ակտիվ հայտնաբերման նպատակով:

2017 թվականի ընթացքում իրականացվել է 2900 հարցում, որոնց արդյունքում թվով 396 անձ, որոնք կասկածելի են համարվել հարցման արդյունքում, ենթարկվել են ֆյուրոգրաֆիկ հետազոտության: Տարվա ընթացքում ՀԿԽԸ կամավորների օգնությամբ հայտնաբերվել և բուժման է ուղղորդվել 5 տուբերկուլյոզի դեպք:

2017 թվականի օգոստոսի 1-ից ՀՀ առողջապահության նախարարության Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի հետ համագործակցությամբ իրականացվում է «Տուբերկուլյոզի վաղ հայտնաբերումը բնակչության խոցելի խմբերում» ծրագիրը, որի նպատակն է ՀՀ տարածքում տուբերկուլյոզի վաղ հայտնաբերումը բնակչության խոցելի խմբերի շրջանում, որը կնպաստի ՏԲ բուժման արդյունավետության

բարձրացմանը և ՏԲ տարածվածության նվազեցմանը:

2017 թվականի ընթացքում ՀԿԽԸ Արարատի մարզային մասնաճյուղի կամավորների ջանքերով մարզի 4 քաղաքային և 12 գյուղական համայնքներում ձևավորվել են շուրջ 32 ինքնօգնության խմբեր, որոնք ապահովվել են անհրաժեշտ կրթական նյութերով և գյուղում տրերով:

2017 թվականի ընթացքում ինքնօգնության խմբերի հանդիպումներին մասնակցել են 1600-ից ավելի դիաբետ ունեցող հիվանդներ, առողջ սարելակերպի վերաբերյալ կրթական միջոցառումներին, ներառյալ Դիաբետի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված Գլոբալ քայլքին, մասնակցել է ավելի քան 10.000 բնակիչ:

Նպատակն է բարելավել շաքարային դիաբետի կանխարգելումը և խնամքը ՀՀ Արարատի մարզում:

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը Դանիական Կարմիր Խաչի հետ



համագործակցությամբ և Դիաբետի համաշխարհային հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացնում է «Շաբարային դիաբետի կանխարգելման և ինսամֆի վերաբերյալ կրթում» ծրագիրը:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ Արարատի մարզում, ընդգրկելով ինչպես քաղաքային այնպես էլ գյուղական համայնքները:

Ծրագրի շահառուները շաբարային դիաբետով հիվանդներն են, նրանց ընտանիքի անդամները, թիրախ բնակավայրերի բնակչությունը՝ ներառյալ երիտասարդությունը և շաբարային դիաբետի առումով ռիսկի խմբերը:

Հիմնական ուղղություններն են՝ շաբարային դիաբետ ունեցող անձանց համար աջակցող միջավայր ստեղծելու միջոցով շաբարային դիաբետի բարդությունների կանխարգելումը և առողջ ապրելակերպի վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացումը:

2017թ. ավարտվեց նաև 2013թ. ի վեր իրականացվող ՄԻԱՎ-ի Կանխարգելման ծրագիրը, որի շրջանակներում սոցիալ-հոգեբանական և կրթական միջոցառումներ ենք կազմակերպել ՄԻԱՎ-ից տուժած երեխաների համար:

Հաշվետու ժամանակահատվածում ԵԿԽ կամավորներն իրականացրել են նաև բազմաբնույթ միջոցառումներ, որոնք նպատակ ունեին բնակչությանն իրազեկելու առողջապահական խնդիրների վերաբերյալ, մասնավորապես քարոզչական աշխատանքներ են տարվել առողջ ապրելակերպի խթանման, ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տարածման ուղղություններով:

Կազմակերպվել են ինտերակտիվ պարապմունքներ դպրոցականների և ուսանողների համար:



420

միայնակ անապահով տարեց շահառու



մոտ
50 000

տնայց



4960

մատուցված ճաշ

Երիտասարդական, կամավորություն և անդամակցություն



«Եղի՛ր մասնիկն ավելիի, քան դու ես», Միջազգային ամառային ճամբար, Աղվերան, 28.07-06.08.2017

Երիտասարդական Կարմիր Խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր խաչի ընկերության շրջանակներում գործող կամավոր անդամների երիտասարդական միավորում է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր մարզային և տարածքային մասնաճյուղերում և գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.

1. Սոցիալական խնամք

- իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված

հանրակացարանաբնակ միայնակ ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին

2. Առողջապահություն

- իրականացնում է ՄԻԱԿ-ի կանխարգելման ուղղված ծրագրեր
- կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ ուսումնական հաստատություններում

- գործարկում է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի SMS տեղեկատվական գիծ

3. Ռեսուրսների հայթայթում

- իրականացնում է Ռեսուրսների հայթայթման ծրագրեր
- կազմակերպում է քարոզարշավներ, դրամահավաքներ, հանգանակություններ, բարեգործական երեկոներ
- պատրաստում է բացիկներ, զարդեր և այլ նյութեր բարեգործական միջոցառման համար

4. Միջազգային համագործակցություն

- իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում Բրիտանական և Գերմանակա Կարմիր Խաչերի հետ «Եվրոպական

կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում

- կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների

5. Մարդասիրական արժեքների լուսաբանում

- կազմակերպում է Կարմիր Խաչի գաղափարների լուսաբանում դպրոցներում և բուհերում
- նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՀԿԻՇ գործունեության մեջ ներգրավմանը
- իրատարակում է ԵԿԻ գործունեությունը լուսաբանող տեղեկագիր:



Մարդասիրական արժեքների տարածում



Կարմիր խաչի համաշխարհային օրվա կապակցությամբ, 2017 թվականի մայիսի 8-ին «Շառլ Ազնավուրի» անվան հրապարակում կազմակերպվեց իրազեկման միջոցառում

Մենք շարունակաբար աշխատանք ենք տանում մարդասիրական արժեքների տարածման, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի, խորհրդանշանների գործածության և չարաշահման, մեր գործունեության ու առաքելության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Այս ուղղություններով մենք աշխատում ենք ԿԽՄԿ-ի հետ համագործակցությամբ:

2017 թվականին 10-ը մարզային ու տարածքային և 2 համայնքային մասնաճյուղերում կամավորները Լուսաբանման դասընթացներ, Կարմիր խաչի թեմայով նկարչական մրցույթներ ու ճամբարներ, Էկո արշավներ են կազմակերպել մոտ 100 դպրոցներում ու կրթական հաստատություններում: Միջոցառումների մասնակցել է ավելի քան 60 000 աշակերտ, ուսանող և ուսուցիչ:

Ժուռնալիստիկայի ֆակուլտետի 39 ուսանողի համար Մեդիամաքս լրատվական

գործակալության հետ միասին կազմակերպել ենք դասընթաց՝ Կարմիր խաչի գործունեությունը և մարդասիրական խնդիրների լուսաբանումը թեմայով: Մեր գործունեությունը ներկայացրել ենք www.redcross.am կայքի, սոցիալական մեդիայի մեր էջերի, ինչպես նաև տարբեր ՉԼՍ-ների միջոցով:

Կարմիր խաչի համաշխարհային օրվա՝ Մայիսի 8-ի կապակցությամբ «Մոսկվա» կինոթատրոնի

հարևանությամբ կազմակերպվել է Կարմիր խաչի գործունեությունը ներկայացնող ֆոտոցուցահանդես:

2017 թվականին թարմացվել է ՀԿԽԸ պաշտոնական վեբկայքը, մշակվել է Բրեյլի ուղեցույց և Հեղինակության ռիսկերի կառավարման ճգնաժամային պլան, Սոցիալական մեդիայի օգտագործման ուղեցույց անձնակազմի ու կամավորների համար:



Համագործակցություն



Եռակողմ համաձայնագիր՝ ԱԻՆ-ի, ՀԿԽԸ-ի և ԿԽՄԿ-ի միջև, 28.06.2017

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, կառավարության, միջազգային և տեղական՝ մասնավոր ու հասարակական կազմակերպությունների հետ:

Երկարացվեց Արտակարգ իրավիճակների Նախարարության հետ Փոխըմբռնման Հուշագիրը

Ապրիլի 4-ին ՀՀ ԱԻ Նախարար Դ. Տոնոյանը և Հայկական Կարմիր խաչի ընկերության Նախագահ Մ. Մսացականյանը ստորագրեցին «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության

ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին ՀՀ ԱԻ Նախարարության և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև» Փոխըմբռնման Հուշագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին արձանագրություն:

Եռակողմ համաձայնագիր ԱԻՆ-ի, ՀԿԽԸ-ի և ԿԽՄԿ-ի միջև

Հունիսի 28-ին ՀՀ արտակարգ իրավիճակների Նախարարության, Հայկական Կարմիր խաչի ընկերության և Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության միջև ստորագրվեց «Հայաստանի Տավուշի մարզում քաղաքացիական պաշտպանության փրկարարական ծառայության կարողությունների զարգացման ոլորտում 2017-2018թթ.



Երկարացվեց «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին ՀՀ ԱԻ նախարարության եւ Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև» փոխըմբռնման հուշագիրը, 04.04.2017

Համագործակցության ծրագիր» եռակողմ համաձայնագիրը:

